

Книжка ртисована
и ртисована
и ртисована

37
W-76

1 MAR 2010

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԳՐԱԳՈՐԾՈՒՆ

ՎԵՐԳՈՒՇ ԱՍՎԱԾԱՏՐՅԱՆ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ
Դ Պ Ր Ո Ց ՈՒ Մ

37

Ա-76

ՊԵՏԱԿԱՆ ՅԵՐԵՎԱՆ 1930

1. Ժ. Կ. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԵՍՏԻՆԱՐԵՆՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

37

Ձ-76

ՎԵՐԳՈՒՇ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

ՆՇ

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ
Դ Պ Ր Ո Յ ՈՒ Մ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ—1930

15 FEB 2013

947

947
44

Հրատ. № 1286

Գրառեպ. № 5103 (բ) Պատվ. № 432 Տիրաժ 4000

Պետհրատի Ֆերկորդ Տպարան Ֆերեանում.

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր յերկրի սոցիալիստական վերակառուցման, համատարած կուլեկտիվացման, կուլտուրական հեղափոխութեան, մարդուն վերափոխելու և վերաբաստիւրակելու շրջանում, յերբ 5-ամյա պլանի իրագործումը հարվածային կերպով դրվում և մեր առջև, չենք կարող թեթև կերպով նայել հակակրօնական աշխատանքներին, անցնել նրա մոտով, ամեն մարդու մասնավոր գործ համարելով այդ, ինչպես կարծում են շատերը: Կրօնամուկ և սնոտիապաշտ աշխատավորութեանը չի կարող սոցիալիզմ կառուցել: Կրօնը սոցիալիզմի վոխերիմ թշնամին և և հակախորհրդային տարրերի ձեռքին ծառայում և իբրև դենք:

Պաշարը կրօնի և յեկեղեցու դեմ յեղել և և պիտի լինի հարվածային. աթմա ել որվա խնդիր և դա և առաջնակարգ նշանակութեան ունի: Ընկ. Լենինը 11 ինտերնացիօնալին ասում էր. «Բաւական չե բացասական վերաբերմունք ունենալ դեպի կրօնն ու յեկեղեցին, անհրաժեշտ և նաև պաշարել նրա դեմ»:

Յեթե կրօնն ու յեկեղեցին բաժանվում են պետութեանից, կազմելով մասնավոր գործ, այդ չի նշանակում, թե կոմկուսակցութեանն ու բանվոր դասակարգը նույնպես պետք և անտարբեր վերաբերվին և վոչինչ չանեն աշխատավոր մասնաւին ինքնագիտակցութեան բերելու համար: Ընկ. Լենինն ասում էր. «Մենք

պահանջում ենք չեկեղեցու բաժանումը պետութիւնից, վորպեսզի պաշարենք նրա դեմ զաղափարական ճանապարհներով՝ մեր մամուլի և խոսքի միջոցով... մեզ համար զաղափարական պաշարը մասնավոր չէ, այլ ընդհակառակը կուսակցութեան և պրոլետարիատի ընդհանուր գործն են:

Կրօնը վտանգավոր յերևութ և պրոլետարիատի, աշխատավոր գլուղացիութեան և ընդհանրապես ճշմարտութեան դէմ շահագործված մասսայի համար: Կրօնը ինչ բնույթ եւ ուզում է ունենա, իր ելութեամբ միանգամայն հետադեմ է և վտանգավոր, վորովհետեւ յուրաքանչյուր կրօն հավատացյալներին իրավական կյանքից կտրելով, բնեւում է նրանց ուշադրութեանը դեպի յերկինք, դեպի մյուս աշխարհը. — «ամենից առաջ աստուծո ռդնութեանը փնտռեցեք, իսկ մնացածն ինքն իրեն կկատարվի», — ասում են նրանց հոգեւորական ազիտատորները: Այս հայացքը ունեցողին, սոցիալիզմի կառուցումը նույնիսկ անհեթեթութուն կթվա:

Մարդկութեան ամբողջ պատմութեան ընթացքում — կրօնը փոփոխվել է համաձայն յերկրի սոցիալիստական դրութեան, բայց նա միշտ եւ ծառայել է ճնշվածներին հանգստացնելու, իրենց դրութեան հետ հաշտեցնելու, — համոզելով, վոր «աստծո կամքն» է, վոր նրանք պետք է իրենց տիրողներին հնազանդվեն անարտունջ: Հոգեւորականները քարոզում են աշխատավորութեանը՝ հաշտվելու իրենց ճակատագրի հետ և հնազանդ լինելու տերերին, թե չէ նրանք կարող են բարկացնել «տիրոջը»: Նրանք պետք է հնազանդ լինեն և լսեն իրենց հալածողներին, և յիթե խփեն նրանց մի յերեսին, շուտաւան մյուսը, վորի փոխարեն

«տերը» նրանց կվարձատրի մյուս կանքում: Այս և սովորեցնում կրօնը հավատացյալներին, աշխարհը քարոզում է այն, ինչ ցանկանում է տեսնել բուրժուազիան՝ աշխատավորութեան նկատմամբ:

Հոկտեմբերյան հեղափոխութունից հետո հակակրօնական աշխատանքները լայն ծավալ են ստանում, քաղաքացիական կռիվների, ռազմական կոմունիզմի շրջանում, պրոլետարիատը պաշարում էր բոլոր ներքին և արտաքին թշնամիների դեմ, նրանց թվում յահարկ նաև կրօնական կազմակերպութուններ: Բայց խորհրդային իշխանութեան տնտեսական քաղաքականութեան փոփոխութեան հետ, փոխվում է նաև նրա աշխատանքի մեթոդները: Եպիգորիկ և մակերեսային պաշարից հակակրօնական պրոպագանդան, փոխվում է ավելի խորացած պարբերաբար և գիտական աշխատանքի: Վերջերս մեր տնտեսական վերելքի և դասակարգային պաշարի սրմամբ, այդ պաշարը ավելի չէ խորացել ու անմիջապես կապվել յերկրի շինարարութեան և նրա խնդիրների հետ: Հակակրօնական շարժումը միանգամայն կոնկրետ, գործնական բնույթ է ընդունում: Քաղաքի թե գյուղի բնակչութեանը հըրաժարվում է կրօնական տոնակատարութուններից, վորողումներ է ընդունում տոն որերին աշխատել և դրա փոխարեն մի այլ որ հանգստանալ մասսայի նախաձեռնութեամբ փոխվում են չեկեղեցիները և վերածվում՝ դպրոցների կամ խճիթ-ընթերցարանների: Որինակ, Յերևանի գավառի Ղամարլվի շրջանի գյուղերի չեկեղեցիների մեծ մասը վեր են ածվել խճիթ-ընթերցարանների: Անցյալ տարի նախաձեռնեցր է գործարանները գաղական տոնին աշխատել են և աշ-

խատավարձը հատկացրել գործադուլավորներին ֆոնդին: Մեզ մոտ կոլլեկտիվներում ուսուցչութունը վորոշում է անում կրոնական տոներին պարապել, իսկ դրա փոխարեն մի ալլ որ հանգստանալ: Աշխատավորութունը լեկեղեցական տոնակատարությունների ծախսերի փոխարեն կազմակերպում է զանազան շինարարական աշխատանքներ:

Անաստվածների միությունը, վոր միայն 3—4 տարվա կյանք ունի, բավական ծավալվել և ուժեղ կես միլիոնանոց բանակ է դարձել, զանազան լեզուներով հակակրոնական թերթ ու ամսագրեր է լույս ընծայում. հրատարակում է հակակրոնական ընդարձակ գրականութուն: Հայաստանում հրատարակվում է «Անաստված» ամսագիր:

Միայն Յերեան քաղաքի Անաստված միությունն ունի 79 բլիշ 4,617 անդամով: Այդ բլիշներից 24-ը դպրոցական են և ունեն 1,766 անդամ: Անհրաժեշտ է, վոր բոլոր դպրոցները հակակրոնական պրոպագանդա կազմակերպեն և բոլոր կողմերից արշավեն դեպի կրոնն ու նրա ագիտատորները:

Դպրոցը, վոր միշտ իր աշխատանքները տարել է խորհրդային իշխանության առաջադրված խնդիրների համաձայն, հակակրոնական աշխատանքներում նույնպես պետք է իր աշխատանքները լինթարկի դասակարգային պայքարին, կուլտուրական հեղափոխությանը, սոցիալիստական շինարարությանը: Դժբախտաբար լուսավորության շատ աշխատակիցներ, դեռ մինչև այժմ ել կարծում են, թե դպրոցը հեռու պետք է մնա հակակրոնական աշխատանքներից, համարելով այդ միանգամայն աննպատակ և նույնիսկ վտանգա-

վոր. լինթադրելով, վոր դա հակառակ արդյունք է տալիս:

Կոմկուսակցությունն ընդհակառակը, գտնում է, վոր քանի դեռ հեղափոխության պրոցեսսը չի վերջացել, քանի դեռ միլիոնավոր գյուղացիների տնտեսությունների մշակույթը տարվում է պրիմիտիվ ձևով, քանի դեռ նրանց տնտեսական դրությունը շատ բանով կախված է բնության պատահարներից, քանի դեռ քաղաքում կան մասնավոր կապիտալիստական ձևերը, կրոնական զգացմունքները կշարունակեն կենդանի մնալ և դեռ յերկար ժամանակ հող կունենա զարգանալու. ուստի պետք է խորացրած ու սխտեմատիկ աշխատանք տանել և կամաց-կամաց արմատախիլ առնել բանվորության և աշխատավորության միջից զանազան կրոնական զգացմունքներն ու նախապաշարութիւնները:

Մեր տնտեսական վերելքի գլխավոր խոչնդոտներից մեկն էլ հանդիսանում է տարբեր դասակարգերի գոլությունը—մեր յերկրում. բուրժուազիան, նեպմունըն ու կուլակն աշխատում են պահպանել մասնավոր առևտուրն ու արդյունաբերությունը, վորով և խանդարում են սոցիալիզմի կառուցումը, և այդ նպատակի համար ոգտագործում են այն բոլոր հնարավորությունները, ինչ վոր նրանք ունեն, նրանց թվում նաև կրոնն ու յեկեղեցին:

Կրոնական ամբողջ հավատալիքները, ծիսակատարությունը, բարոյախոսությունը մի նպատակ ունի՝ պաշտպանել և արտահայտել շահագործող դասակարգը: Կրոնը կապիտալիստական հասարակակարգում ծառայում է վորպես դենք բուրժուական ռեակցիայի

համար, իսկ խորհրդային միության մեջ նա արգելակ է սոցիալիստական շինարարությանը: Լենինը ասում էր՝ «Բոլոր ժամանակակից հավատները (религия) ու յեկեղեցիների, բոլոր և ամեն տեսակի կրոնական կաղամակերպությունների գոյությունը մարքսիզմը միշտ բացատրում է վորպես բուրժուական ռեալիզմի որդան, վորը պաշտպանում է շահագործողներին ու մթթադնում բանվոր դասակարգի գիտակցությունը:

Բոլոր շահագործող պետութայունները կարիք են դնում իրենց հասարակարգի պահպանմանը և այդ իրագործում են յերկու միջոցով. դահիճների ու կրոնի ռգնութայամբ, վորոնք շատ ներդաշնակ լրացնում են միմյանց, մեկը գենքի մյուսը՝ քարոզի ու համոզելու միջոցով:

Յեկեղեցին շահագործող դասակարգի ձեռքին միշտ գործիք լինելով, այժմ իհարկե նա մորիլիդացիայի յենթարկելով իր ամբողջ ուժերը, շարունակում է իր հակահեղափոխական աշխատանքները, հենարան ունենալով նաև արտասահմանի բուրժուազիային և նպիտակ գվարդիականներին, վորոնք վոչինչ չեն խնայում բայլչեիկների և խորհրդային Միութայն դեմ պայքարելու համար, — և յեկեղեցուն հակապական գուամադներ են հատկացնում: Այդ հակախորհրդային պրոպագանդայի պատկերը պարզ կլինի, յեթ տանք միքանի որինակ, հենց այնտեղ տարվող հակակրոնական աշխատանքներից:

1926 թ. Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում կառուցվելու յե 1,500 յեկեղեցի, այսինքըն ամեն որ 5-ը: Հայտնի գործարանատեր Ֆորդը բոլոր կրոնական հոսանքների համար, բանվորական

իայրերում, իր հաշվով կառուցում է աղթատեղիներ. նպատակը իհարկե պարզ է՝ մթագնելու աշխատավորութայն գիտակցությունը՝ կրոնական զգացմունքներով: Գործարանատերերը հովանավորում են յեկեղեցին և հանդիսանում են համայնքների ղեկավարներ:

Գերմանիայում փորձ է արվել ամբողջ դպրոցները հանձնելու հոգևորականութայնը, նույնը տեղի յե ունեցել նաև Ավստրիայում, ուր վորոշ տրամադրություն կա ուսուցիչների նշանակումները հանձնել հոգևորականութայնը:

Նրանք նյութական ոժանդակություն են հասցնում նաև խորհրդային Միութայն յեկեղեցիներին:

խորհրդային յերկրում վերջերս յեկեղեցին, ինչպես ասացինք վերևում, աշխուժացել է, նոր ուժով անցել պայքարի և ցանկանում է գրավել իր նախկին դիրքը: Նա ոգտագործում է բոլոր հնարավորութայններն: Այժմյան հոգեվորականութայն գործունեյությունը գնում է բոլորովին ալ ուղիով ու մեթոդներով: Նրանք շատ լավ գիտեն, վոր նախկին մեթոդները հնացել են և նրանցով հաջողություն չի կարելի ունենալ: Նրանք «նոր» մարդիկ են դարձել և հարմարվել ժամանակին, նրանք վարպետութայմբ ծածկում են իրենց հակահեղափոխական դեմքը չեղդութայմբ և նույնիսկ «սիրով» դեպի խորհրդային իշխանությունը: Նրանք արդեն շոշափել են աշխատանքի նոր մեթոդները, ճառեր են ասում հեղափոխական տոներին, հարգում են հեղափոխական ղեկավարների հիշատակը, Հիսուսին սոցիալիստ են դուրս բերում, քիչ են խոսում հրաջների մասին, աշխատում են ապացուցել, վոր յեկեղեցին սուրբ է և անքիժ, մեղավոր են միայն նրա առանձին գործիչները:

Հոգեկորականութիւնն իր աշխատանքներն այն-
քան ե հարմարեցրիւ շրջապատին, վոր Կիւտում հրեա-
կան մի ռաբբի դիմել ե իր քաղաքապետին, թույլ տա-
լու սինագոգայում կարմիր անկյուն կազմակերպելու:

Բարեփոխվել են յեկեղեցիներում ժամասացու-
թյան ձևերը, հրավիրում են լավ յերգեցիկ խմբեր,
կազմակերպում են կոնցերտներ, զրույցներ, զեկու-
ցումներ: Մեր քաղաք աշխատանքներին զուգընթաց
կազմակերպում են իրենց միսիոներական պրոպագան-
դան, հայտնի են մանավանդ նրանց «սիրօ յերեկոնե-
րը», վորոնք նմանվում են մեր գեղարվեստական յի-
րեկոնիւրին: Այդ յերեկոններին տեղի յեն ունենում բա-
նաստեղծութիւնների ընթերցում, յերգեցողութիւն,
յերաժշտութիւն, դրամատիզացիա,—իսկ այս բոլորը
զարդարվում ե կրօնական ագիտացիայով, վորը կար-
միր թելի պես անցնում ե ամբողջ ծրագրների միջո-
ցով և զարդարում այն — կրօնական միստիցիզմով:

Խորհրդային «բերքի» և «անոռի» ուրերի դիմաց
կազմակերպում են իրենց կրօնական «բերքի» ուրը:
Լույս են ընծայում պատի թերթ: Նրանց մեթոդների
մեջ ե մտնում նաև անհատական ագիտացիան: Ազան-
դավորներն աշխատում են անհատորեն ազդել բան-
վորներին վրա. հաճախ գրում են Մոպրի և Պաշապիա-
քի մի բջիջներին անգամ, վորպեսզի հնարավորութիւն
ունենան շրջելու բանվորների տները և զրուցելու նը-
րանց հետ:

Գյուղում կուլակը, քաղաքում հեպմանն ու նախ-
կին տիրող դասակարգի բոլոր ֆնացորդները կրօնի մի-
ջոցով ցանկանում են խանգարել Խորհրդային Միու-
թյան սոցիալիստական շինարարութիւնը: Նրանք սե-

տագործում են յեկեղեցին ու հոգեվորական կազակեր-
պութիւններին տված լեզալ հնարավորութիւնները՝
իրենց հակահեղափոխական գործունեության համար:
Նեպմանն ու կուլակը յեկեղեցին դարձրել են իրենց
պաշարի կենտրոնը, իսկ տերտերներին ու տիրացու-
ներին ագիտատորներն ու պրոպագանդիստները:

Ներկայումս հոգեվորականութիւնն այնքան չի
զբաղվում կրօնական քարոզներով, վորքան հակա-
խորհրդային պրոպագանդայով: Նրանք իրենց ամբողջ
ուժերը լարել—դեմ են դուրս գալիս 5-ամյա պլանին,
անընդհատ շարաթիւն, կոլխոզ շինարարութիւնը, գար-
նանացանի կամպանիային, հացամթերմանը, կենցա-
ղային բարեփոխութիւններին և սոցիալիստական շի-
նարարութիւն ձեռնարկումներին: Մերպուլիկայի
գավառում յերկու գյուղացի քահանաներ միմյանց հետ
սոցմըցման պայման են կնքել՝ թույլ չտան իրենց
գյուղում կոլտնտեսութիւն կազմակերպելու: Ուրալում
հնարել են աստծո նամակը, վորտեղ վարկաբեկում են
կոլխոզ շինարարութիւն գաղափարը: Բողոքում են
անընդհատ շարաթիւ վեմ, վոր բայլշեիկները «խզում
են վերջին հնարավորութիւնը յեկեղեցի գնալու և
աստծուն աղոթելու»: Նրանք ասում են «բայլշեիկներն
աշխատավորութիւնը խաբում և խլում են նրանցից
վերջին հանգիստը»:

Մեզ մոտ, Հայաստանում հոգեվորականները հետ
չեն մնում Ռ. հոգեվորականութիւնից վոչ մի միջոց
չեն խնայում իրենց ագիտացիան կազմակերպելու և
մեր սոցիալիստական շինարարութիւնը խանգարելու:
Որինակ՝ նրանց և կուլակների ձեռներեցութիւմբ բա-
վական տարածվել ե ընկնավորութիւնը, ընկնելով,

նրանք սկսում են աստծու և զանազան սրբերի ան-
ունից խոսել և նրանց կամքը հայտնել: Ինչպես այդ
տեղի յեր ունեցել Դարալագյաղի շրջանի Մարտիրոս
գլուղում: Ընկնալորն ընկած ժամանակ հայտնում է
վոր պետք է լսել Ալեքսանին (հայտնի կուլակի),
«տերը» նրան արտոնություն է տվել և այլն: Ալեք-
սանն էլ իհարկե մատաղ է մորթում բաժանում չքա-
վորներին և իրեն համար հեղինակություն ստեղծում:

Դուրդուղուլու շրջանի Սարգարաբադ գլուղում
կոլխոզիներարություն ժողովի ժամանակ քահանա-
ները զանգերը խփում և հավատացյալներին չեկեղեցի
յն հրավիրում և սկսում հակակոլխոզիներարական
քարոզ կարդալ, համոզելով, վոր իշխանությունը
նրանց խաբում է, ցանկանում է նրանց ձեռքից կա-
նանցն ու հարստությունն առնել:

Կրոնական ագիտացիան մեծ ջանք է գործ դնում
նաև չեքիտասարդությունը գրավելու համար: Ագի-
տացիա յն տանում ծնողների մեջ, պատմում են
նրանց կրոնական զանազան հեքիաթներ, կոմյերիտ-
միություն և պիոներական կազմակերպությանը հա-
կադրում են քրիստոնեական «չեքիտասարդության
միություն»

Նրանք (նրանց թվում նաև դաշնակցությունը)
պակաս չեն ոգտագործում նաև մեր չեքիլի ազգային
տրամադրությունները և մանավանդ շովինիստական
զգացմունքները: Նրանք իրենց քարոզով էլ ավելի
յն գրգռում հնի միացորդները և լարում մութ մաս-
սային մեկը մյուսի դեմ և չեկեղեցին այդ տեսակետից
ամենալավ գործիքն է վառ պահելու կրոնական զգաց-
մունքները մասսայի մեջ, նրա միջոցով էլ նպաստե-

լու նրանց տգիտությունը և ոգտագործել այդ տգի-
տությունը հենց իրենց ազգասիրական շահերի համար:

Կապիտալիստական շատ չեքիլներում հոր սերնդի
դաստիարակության գործում մեծ դեր է խաղում չե-
կեղեցին, մանավանդ ստորին խմբերում: Այնպիսի
առաջնակարգ պիտություններում ինչպիսին և Գեր-
մանիան և Ավստրիան, դպրոցը գտնվում է չեկեղեցու
ձեռքին, նման տեղերում, չեթե ծնողները թույլ չեն
տալիս չեքիլաներին ուղարկել կրոնական դպրոցներ
այդ արվում է դատարանի միջոցով: Ամերիկայում շատ
համառություն դպրոցից դուրս են ձգում Դարվինի
«տեսակների զարգացման» ուսմունքը: Կրոնական
ուսմունքը աշակերտների մեջ տարածվում է կինո-
ները և թատրոնների միջոցով, Գերմանիայում որինակ՝
Փաշիստական թատերական միությունը, չեքիտասար-
դության համար կրոնական մոգով նկարվում են կինո
նկարներ և արգելում են ցուցադրել հեղափոխական
նկարներ: Կրոնի դրոշի տակ բազմաթիվ չեքիտա-
սարդների դաստիարակում են հլու հնազանդ ծառա-
ներ — կապիտալիստների համար:

ԴՊՐՈՑՆ ՈՒ ԿՐՈՆԸ

Խորհրդային դպրոցն ակտիվ մասնակից է խորհրդային իշխանության խնդիրների կենսագործմանը նա հանդիսանում է նրա գաղափարները տարածողը մասսայի մեջ, նույնը, պիտի տեղի ունենա նաև հակակրոնական աշխատանքների նկատմամբ: Հակակրոնական ագիտացիան և պրոպագանդան չեն կարող շարժել աշխատավոր մասսային, մինչև դպրոցը չշարժվի մեռյալ կետից, մինչև լուսավորության աշխատանքները չդրվեն գիտական մարքսիստական հողի վրա: 26-րդ ժողովրդի VIII կոնգրեսում արված հակակրոնական աշխատանքների կենտրոնը դարձնում է դպրոցն ու խրճիթ-ընթերցարանը:

Այժմ խորհրդային իշխանության առջև դրված են, — բարձրացնել գործարանների արտադրությունը ուժեղ թափ տալ խոշոր արդյունաբերությանը, կուլեկտիվացման ու մեքենայացման յենթարկել գյուղի տնտեսությունը, բարձրացնել նրա բերքը. այս բոլորի հետ բանվոր դասակարգը հարձակում պետք է գործի սոցիալիստական շինարարության բոլոր դիրքերում իսկ դա անկարելի չե առանց կուլտուրական հեղափոխության: Կրոնը, նրա ագիտատորների աշխատանքները, միանգամայն հակասում են գիտության և տեխնիկայի նվաճումներին, ուրեմն նաև կուլտուրական հեղափոխությանը, հետևապես հակակրոնական աշխա-

տանքները կտրված չեն խորհրդային իշխանության ներկա մոմենտի մյուս պարլեմից, այլ հանդիսանում են կուլտուրական հեղափոխության գլխավոր և ամենակարևոր ողակներից մեկը: Այժմ, պայքարը — կրոնի դեմ ակտուալ է և որպես խնդիր, ինչպես շեշտում է Կոմինտերնի VI կոնգրեսը: «Կուլտուրական հեղափոխության խնդիրների թվին է պատկանում նաև պայքար ժողովրդի ուղիղ միտքի դեմ — պայքար կրոնի դեմ, վոր պետք է տարվի անշեղ ու ծրագրված»:

Մենք, մանավանդ մեր դպրոցները, պետք է խոստովանել, վոր շատ քիչ բան ենք արել այդ ուղղությամբ, ճիշտ է այնտեղից դուրս ենք ձգել կրոնի դասավանդումը, բայց դա դեռ բավական չէ: Այդ նկատելի է ինքը ընկ. Լենինը, վորը 22-րդ թ. իր վերջին հոգևածներում գրել է, թե հակակրոնական պրոպագանդան մեղմոթ բավական անբավարար է և շատ դանդաղ է ընթանում, վոր անհրաժեշտ է ուժեղ հակա-կրոնական աշխատանք տանել: Շատ խոշոր և կուլիտ սխալ կյիներ մարքսիստի կողմից կարծել, թե բազմամիլիոն (մանավանդ գյուղական և արհեստավորները) մասսան չեն թարկված տգիտության, խավարի և նախապաշարունակների, կարող է դուրս գալ ուղիղ ճանապարհի — դուրս մարքսիստական ուսմունքով: Այդ մասսային անհրաժեշտ է տալ բազմազան աթեիստական պրոպագանդայի մատերիալ, ծանոթացնել կյանքի բազմազան այն փաստերին, մոտենալ նրանց թե այսպես, թե այնպես, հետաքրքրել նրանց, սթափեցնել, արթնացնել կրոնական քննից»:

Հակակրոնական աշխատանքներն մեղմոթ մոտ փոխվել են համաձայն խորհրդային իշխանության առա-

ջադրած խնդիրները և նրա տնտեսական զարգացման հտապները: Ռազմական կոմսոնիզմի և հեպի սկզբի տարիները ընտրող են աղմկալից ազդեցություն հակա-կրոնական աշխատանքներով, վորը արտահայտվում էր հակակրոնական կարնավալներով, չեկեղեցիների փակումով, չեկեղեցիների հարստութունների գրա-վումով և այլն: Դա մասամբ պատասխան էր քաղա-քացիական կոնֆլիկտների, հոգեվորականության հակահեղա-փոխական պայքարի և նրա դիմադրությունը, սովի տարիներին չեկեղեցական հարստությունների գրավ-ման ժամանակ մյուս կողմից էլ, իհարկե, դա աշխա-տանքների վորող ուղիների վորոնումներ էր: Բայց այդ աշխատանքները սխառմատիկ և պլանաչափ չէր ու կամպանիոն բնույթ էր կրում: Դա միայն սգիտա-ցիա յեր և այն ել չերեան էր գալիս չեկեղեցական տոներին:

Դպրոցը նույնպես տարվել էր այդ կամպանիա-ներով, բայց նրա այդ սգիտացիոն կամպանիաները որդանապես կապված չեն յեղել նրա ամբողջ արտա-դրական պլանին, անցնելիք նյութին, հյուսված չեն չեղել դպրոցի ամբողջ ծրագրային և առարկա աշխա-տանքներին: Դպրոցը դեռ ընդունակ չէր իր նյութե-րով ու մանկավարժական մեթոդներով ընդգրկել այդ աշխատանքները:

Հակակրոնական աշխատանքները պետք է սկսել վոր միայն դպրոցից ալ նախադպրոցական հիմնարկ-ներից: Մեր դաստիարակության ամբողջ սխառմալով պետք է անցկացվի հակակրոնական դաստիարակու-թյուն:

Դպրոցի հակակրոնական պրոպագանդան պետք

է տարվի յերկու ուղղությամբ աշակերտների հետ ու ու նրա շրջապատում, և ծնողների մեջ:

Դպրոց հաճախող յերեխան հակասական հոգե-կան ապրումներ ու տատանումներ են ունենում: Այդ պարզ կլինի այն ժամանակ, յերբ մենք կուսումնա-սիրենք նրա շրջապատի այն պայմանները, ուր նա մեծանում է: Յերեխայի հոգեկան աշխարհը բաժան-վում է յերկու հակադիր կողմերի, — մեկի կենտրոնն է խորհրդային դպրոցը, իսկ մյուսն՝ ընտանիքը: Կան ընտանիքներ, վորոնք իրենց կրոնական զգացմունք-ներով ու նախապաշարումներով հաճախ պայքարում են դպրոցի կոմունիստական դաստիարակության դեմ և խանգարում նրա աշխատանքները:

Յերեխան չեկեղեցական տոնակատարություն-ներին տեսնում է, վոր տանը՝ ընտանիքում առանձ-նապես խնամքով ու շուքով պատրաստում են, — զատկական տոները, թաթախումը, տոնածառը, (վորը դեռ բավական չափով կա մեր շրջապատի ընտանիք-ներում), միայնց մոտ հաճախելը, խմելը, քեֆ անելը, տոնական տրամադրությունը և այլն: Յերեխաներից շատերը հաճախում են չեկեղեցի, տեսնում այնտեղ ճոխ ժամասացություն և մանավանդ յերբ նրանց չեկեղեցում յերգել են տալիս:

Յերեխաները իրենց հետ դպրոց են բերում հա-զար ու մի փեսակ կրոնական տրամադրություններ տրադիցիաներ ու սնտիապաշարություն և հաճախ դպրոց գալուց հետո էլ, շարունակում են դառնվել նույն մութ ու փտած շրջապատի ազդեցության տակ: Այսպես ուրեմն յերեխայի հոգեբանությունը չենթարկ-վում է յերկու ուժի: Մի կողմից ընտանիքը՝ իր նա-

հապետական և կրոնական ազդեցությամբ, իսկ մյուս նորմից՝ կամաց-կամաց ազդում են նրա վրա դպրոցը քաղցելով նրա առջևը նոր հորիզոններ, առաջ բերելով նրա մեջ նոր հետաքրքրություններ և այստեղ ուսուցիչը նրա աչքում դառնում է մի նոր հեղինակություն, վոր հակադրվում է հորն ու մորը:

Աշակերտը, նման դեպքերում, չափազանց ուշադիր է ուսուցչի յուրաքանչյուր քայլին և խոսքին: Ուսուցչի ամենափոքրիկ սխալ քայլն անգամ, կարող է հակադասական ազդեցություն թողնել աշակերտների վրա և նրա խոսքը բոլորովին հակառակ արդյունք վարող է ուալ, հետևապես ուսուցիչը չափազանց զգուշ պիտի լինի դեպի իր գործունեությունը վորպեսզի աշակերտը կասկածով չվերաբերվի դեպի նա. Շատ պարզ է, այն ուսուցիչը, վոր հակակրոնական աշխատանք է տանում դպրոցում, իսկ տանը յենթարկվում իրեն տնեցիներին և կատարում զանազան ծիսակատարություն, չի կարող հեղինակություն ունենալ թե շրջապատում և թե մանավանդ աշակերտների մեջ: Ուսուցիչն ինքը պետք է դաստիարակի իր ընտանիքին և ազդե շրջապատի վրա, վոչ միայն խոսքով, այլև գործով:

Դժբախտաբար ուսուցիչների մեջ դեռ բավական թվով հավատացյալներ կան, վորոնք հազար ու մի պատրվակով աշխատում են դպրոցը հետ կասեցնել հակակրոնական աշխատանքներից: Այդպիսի ուսուցիչը խորհրդալին դպրոցում տեղ չպիտի ունենա: Նմաններից պետք է ազատվել առանց տոտանվելու: Հավատացող ուսուցիչը չի կարող հակակրոնական աշխատանքներ տանել, ինքն նա նույնիսկ ցանկանա:

Հիտաքրքիր է մի որինալ, վոր տեղի է ունեցել մի հավատացյալ ուսուցչի կողմից, նա շատ լավ, բովանդակալից գեկուցում է տալիս հակակրոնական նյութի մասին, բայց չի բը լսողները հարց են տալիս, թե ինքը մասին, բայց չի բը լսողները հարց են տալիս, թե ինքը հավատացյալ է նա պատասխանում է՝ «իհարկե հավատացյալ եմ, ինձ հանձնարարել են գեկուցելու, չես ել գեկուցում եմ»: Նման ուսուցչի աշխատանքները արդյունքը հասկանալի է, թե ինչ կլինի:

Ժամանակն է, վոր դպրոցները անցնեն ծրագրաված ու սխտեմատիկ հակակրոնական աշխատանքներին և վոչ միայն դաստիարակեն յերեխաներին այլև ազդեն շրջապատի վրա և ոգնեն նրան, վորքան կա՝ քիչ յե շուտ ազատվել կրոնական նախապաշարումներից:

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ՅԵՎ ՊԵՏԳԻՏԻՈՐՇԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխության տասներեք յերբորդ տարում անհրաժեշտ է կտրուկ դնել ու պահանջել, վոր հակակրոնական աշխատանքները կապվեն առըրյա անցնելիք նյութի հետ և բերեն վորոշ հակակրոնական յեզրակացություն:

Շատ հաճախ ուսանողները կարծում են, թե հակակրոնական աշխատանքները միայն հասարակագիտություն ուսուցչի գործն է, վորովհետեւ նա յե անցնում դասակարգալին պայքարը, և իրենց միանգաման հեռու յեն պահում հակակրոնական աշխատանքներից: Շատերն ել կարծում են, թե հակակրոնական աշխատանքը միայն այն է, վոր աշակերտին բացատրեն:

—աստված կամ թե չկա, մոռանալով վոր, չեթե յերեւելոյթներին տալիս են գիտական բացատրութուն, դա ինքնըստինքյան արդեն հակադատութեան աշխատանք է:

Հակակրօնական աշխատանքները վոչ միայն հասարակագետի ալ և բոլոր ուսուցիչներն ու ամբողջ դպրոցի գործն են: Այնքան-վորքան կրօնը հակասում է գիտութեանը, այնքան-վորքան կրօնական զգացմունքներն ու սնտիրապաշտութիւնը խանգարում են կուլտուրական հեղափոխութեանը, դպրոցը չի կարող անտարբեր լինել դեպի հակակրօնական աշխատանքները և միացյալ ճակատով չհարձակվել նրա վրա:

Յուրաքանչյուր դասատու իր առարկան անցնելիս պետք է նյութը կապի հակակրօնական աշխատանքներին և դեպքը պատահած ժամանակ, չզլանա բացատրութիւն տալ: Որինակ՝ կենսաբանութեան դասին, զարգացման թեորիան անցնելիս ուսուցիչը չի կարող կանգ չառնել Դարվինի թեորիայի վրա, նրա ուսմունքի դրութեան—կապիկի զարգացրան պրոցեսսի և դասակարգային պայքարի, սպիրտականութիւնների և նեգրների պատմութեան հետ կապելով: Յեւ յեթե ուսուցիչը այս բոլորը ճիշտ մարքսիստորեն բացատրի, սա արդեն ինքնըստինքյան կլինի հակակրօնական ագիտացիա: Բայց պիտի խոստովանվել, վոր միշտ ալ պէս չի լինում, և ուսուցիչները հաճախ լրիվ պատասխան ու բացատրութիւն չեն տալիս:

Հակակրօնական աշխատանքների ժամանակ նրանից բղիւծ հարցերից—պարզ չերեւում է, վոր վոչ մի ուսուցիչ չի կարող անցնել իր առարկան, առանց կուլտուրայի պատմութեան, մանավանդ, վոր աշա-

կերտների հարցերին պետք է պատասխանել լրիվ, այնպես վոր, վոչ մի մութ և անհասկանալի հարց չմնա: Բոլոր առարկաների ուսուցիչները, ինչեւ ուզում են նա ավանդի, քիմիա, բնագիտութիւն, պատմութիւն կամ մաթիմատիկա, աշխարհայացքով պետք է մարքսիստ լինի: Մենք պետք է այնպես դաստիարակենք, վոր աշակերտները կարողանան հարցերին նայել վոչ թե կալուն-քարացած դրութեամբ, միայն այս որվա դրութեան մեջ, այլ նրա զարգացման պրոցեսսում: Մենք պետք է կարողանանք բացատրել, վոր կրօնը մարդկութեան զարգացման զանազան շրջաններում տարբեր բնույթ է կրել, և ո՛րտ կապված է յեղի տնտեսական կյանքի զարգացման պրոցեսսի հետ: Ուսուցչութեան նպատակը պետք է լինի՝ ցույց տալ աշակերտութեանը կրօնի բացասական նշանակութիւնը՝ աշխատավորութեան համար, կրօնի տված սխալ բացատրութիւնը մարդկութեան ու յերկրի ծագման մասին, ապացուցել, վոր դրանք հնարված են վորոշ շրջանի և վորոշ դասակարգի մարդկանց կողմից:

Հակակրօնական աշխատանքները ծրագրի հետ կապելով, պետք է ինսկատի ունենալ աշակերտի տարիքը, նրա անցնելիք նյութը, և ըստ այնմ դասավորել նյութը: Մենք մանրամասն կանգ կառնենք յուրաքանչյուր խմբի անցնելիք նյութի վրա:

Նախադպրոցական հիմնարկներում պետք է ոգտովել յերեխաների եմօցիօնալ բնավորութիւնից և աշխատել հեղափոխական տոնակատարութիւնները հակադրել կրօնականին կազմակերպել ճօխ, վառ, զեղարկեստական խոր տպավորութիւն թողնի յերեխաների վրա, իսկ յեկեղեցականը ընդհակառակը

աշխատել վոչ մի տոնական բնույթ չունենա, ավելի լավ կլինի լեթե այդ որը կազմակերպենք զբոսանք կամ եքսկուրսիա և հեռու տանենք շրջապատի գանազան տոնակատարություններից: Մանկհիմարկի հակակրոնական աշխատանքները պետք է կատարել կազմակերպող մոմենտի հետ, կոնկրետ ուսումնասիրելով լեթեխաների շրջապատը և նրանց կրոնական սնտրիապաշտությունը և կոնկրետ նշի իր անելիքներից: Յերեխաները շատ անգամ լսում են ու սովորում շրջապատից յերեւոյթների իդլաիստական բացատրությունները, անհրաժեշտ է նման դեպքերում մանրամասն և մատչելի մատերիալիստորեն պարզաբանել:

Փոքր հասակի լեթեխաներին—առաջի և լեթերորդ խմբերում պետք է բացատրել իրենց շրջապատի սովորությունները, հասկացնելով նրանց այդ բոլորի պատճառները: Որինակ մեր շրջապատում լեթեխաներին հաճախ վախեցնում են սատանաներով, հրեշտակներով, մեռելներով և այլն, անհրաժեշտ է բացատրել լեթեխաներին նրանց վախենալու անհիթեթությունները:

Յերեխաները հաճախ հարցնում են «աստված ամեն ինչ տեսնում է չե՞, լեթե մենք չարություն անենք, կբարկանա և կպատժի», այս բոլորին պետք է ճիշտ բացատրություն տալ: Անհրաժեշտ է նաև ճիշտ բացատրություն տալ զանազան ծիսակատարություններին ու սովորություններին, վորոնցով շրջապատված է լեթեխան և տեսնում է իր առօրյա կյանքում:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ Ա. ԽՈՒՄԻ

Յերեխայի հետ հակակրոնական աշխատանքները պետք է սկսել հենց դպրոց գալու որից, սովորեցնելով շրջապատի կյանքը տեսնել այնպես, ինչպես կա և շրջապատի լեթեւոյթների պատճառներին տալ լեթերիտիկ բացատրություն: Որինակ «Միջավայրն ու աշխատանքն աշնանը և ձմռան նախապատրաստությունը» կոմպլեքսն անցնելիս: Յերեխաները դիտում են բնության փոփոխությունները, տերեւատում են բնության փոփոխությունները, Մարդիկ աշխատում թափ, անձրեւ, թռչունների չվելը: Մարդիկ աշխատում են դաշտից ու բանջարանոցներից շտապ հավաքել մթերքը լավ գիտենալով, վոր կարող են լեթեխաները բնության պատահարներին, լեթե ուշացնեն աշնան աշխատանքների ավարտելը:

Դիտողությունները մի ընդհանուր հայտարարի լեն բերում և լեթեակացություն անում, վոր բնության լեթեւոյթները փոխվում են ըստ սեզոնների, փոխվում է բնության տեսքն ու մարդկության աշխատանքները: Մարդիկ, կենդանիները, թռչուններն ու բուսականությունը հարմարվում են բնության լեթեւոյթներին: Այս ամփոփումից հետո, լեթեխաներին հարց է տրվում, ինչո՞ւ աստված այնպես չի անում, վոր բոլորին լավ լինի, վոր լեթեւոյթները չզնան, դպրոցում չմըսեն և այլն: Պետք է աշխատել լեթեխաներից ստանալ այնպիսի պատասխան, լեթե այնպես է լեթել անցյալ տարի, նախանցյալ տարի, այնպես կլինի զալ տարի: Բնությունը չի ճանաչում աստծո ուժը:

Առաջին խմբի մյուս թեման «առողջության պահպանումը»: Աշխատանքի պրոցեսում չեղեխաները ծանոթանում են մարդու առողջության պայմաններին. նրա սննդի և աշխատանքի պայմաններին, հիվանդության դեպքերին, բժշկական ոգնությունը: Այստեղ բացատրություն է տրվում քահանաների ավետարան կարդալու, մոմ թափելու, նեոս դնելու և զանազան հեքիմական բժշկությունների մասին:

Այս զրույցը անպայման տարվում է տեղի պայմաններին կոնկրետ դեպքերի մասին, — ինչ վրա չեղեխան լսում է տանը: Թեման անցնելիս ուսումնասիրվում է խմբի չեղեխանների կենցաղական դրությունը և յեթե մի աշակերտ շատ վատ պայմաններում է լինում խումբն աշխատում է նրան կուլիկատիվ ոգնություն հասցնել և ցույց տալ, վոր աստված ոգնություն չի հասցնում: Այնուհետև յեզրակացություն պետք է հանել, վոր աստված չկա, իսկ յեկեղեցին էլ սիրում է, վոր իրեն ոգնեն:

Շատ լավ կլինի, վոր բժիշկը կամ ուսուցիչը հրավիրեն ծնողական ժողով և դնեն մարդու կազմության և առողջապահության մասին զեկուցում, կապելով յեթե կերպով մարդու ծագման թեորիային հետ:

Այս նույն ձևով պետք է մշակել և մյուս թեմաները:

Բ ՏԱՐԻ

ՈՅՆԱՆԱՅԻՆ ՈՅՆԱՆԱՅԻՆՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յերեխաների առաջի տարվա ստացած ապավորությունը բնության յերեույթների և մարդկային աշխատանքի փոխհարաբերությունը խորանում է քա-

ղաքի և գյուղի փոխհարաբերությամբ: Պետք է բացատրել յերեխաներին, վոր տեխնիկան, մեքենան, կուլիկատիվ աշխատանքը բարձրացնում են բերքը, տնտեսության յեկամուտը, լավացնում են ապրանքի վորակը և ընդհանրապես հասարակական կյանքը: Յանկալի յե զրույցի միջոցով, (յեթե հնարավոր է), մատերիալ հավաքել: Հարց է տրվում ոգնում է կրոնն ու յեկեղեցին բերքի բարձրացմանն ու ապրանքի շատացմանը:

Նախքան այդ մի շարք հարցեր է տրվում աշակերտներին 1) յեթե մեքենան փչանում է համ պիտի հրավիրել նորոգելու 2) յեթե սալը կոտրվում է, ինչ պիտի անել, 3) յեթե անձրևներ են սկսում ցորենը դաշտում չթրջվելու համար ինչ պիտի անել, և մի շարք նման հարցեր: Վերջում զրվում է ինչ է սովորեցնում կրոնն ու յեկեղեցին. և պատասխան է ստանում հուսալ ասած զրա, ոգնել յեկեղեցուն և հաշովել իր չքավորության հետ:

Յեզրակացություն է արվում. կրոնն ու յեկեղեցին իրենց խաբեբայական ուսմունքով ֆրասում են մեր տնտեսությանը:

Պատրաստվում է հակակրոնական լողունգներ, պահվում խմբում և ոգտագործում բերքի տոնին և Հոկտեմբերյան Հեղափոխությունը:

Մյուս թեման «Եյաճքը յեվ աշխատանքը գյուղում—գարնում»:

Յերեխաները ուսումնասիրում են ջրի յերեք տեսակ դրությունը, մարմինների լախանալու որենքը, ջերմաչափի գործադրությունը, սնդիկի բարձրանալ և իջնելը:

«Մարգկանց ուսեղիք» յենթաթեմայում պիտի կանգ առնել պատի, ստամոքսի հիվանդութիւնները վրա, կարելի չէ պատմել վաչրենիները շատակերութեան մասին:

Մյուս յենթաթեմայում «Կեոջ աշխատանքը քննաքննում», պիտի ոգտագործել և հակադրել Խորհրդային իշխանութեան ձեռք առած միջոցները՝ կնոջ ազատագրման համար, և յեկեղեցու ուսմունքը կնոջ ազատագրկման մասին, — տղամարդը ընտանիքի գլուխն է, կինը ամուսնուց պետք է վախենա, ամուսինը մինչև մահ կնոջ տերն է, իսկ կինը մինչև մահ նրա հըռ հնազանդ լսողը:

Լենինի որերի տոնակատարութեանը բացատրել, թե ինչպէս քահանաներն ու յեկեղեցին խաբում են բանվորներին, պարզաբանել Լենինի հայացքները կրօնի ու յեկեղեցու մասին:

Գ. ԽՈՒՄԲ

ԹԵՄԱ «ՔԱՂԱՔՆ ՈՒ ԳՅՈՒՂ»

Կազմակերպել եկեղեցւորիա դեպի քաղաք, իսկ յեթե քաղաքումն են, դուրս գալ շրջակայքը և հեռավրել դիտել քաղաքը, յերեխաների ուշադրութիւնը հրավիրել քաղաքի յեկեղեցիների վրա: Նրանց մեջ հարց ծագեցնել, թե ինչու քաղաքում այդքան յեկեղեցի կա: Հանձնարարել յերեխաներին գտնել մի յեկեղեցու մասին տեղեկութիւններ հաւաքել 1) ի՞նչ է շինված յեկեղեցին 2) ո՞վ է շինել 3) քահանաների թիւը 4) ի՞նչ միջոցներով են ապրում հոգևորականները, և ապա զրույց եկազմակերպվում «ինչ դեր է խաղացել յեկեղեցին և հոգևորականութիւնը», նյութի շուրջը:

Յեղրակացութիւնն է հանվում, վոր յեկեղեցին ու քահանաները վորպես զենք են ծառայել կալվածատերերի ու բուրժուաների ձեռքին:

Ինքի տոնի ժամանակ հանձնարարել աշակերտներին — նյութ հաւաքել լավ և վատ մշակվող տնտեսութիւնների մասին: Հաւաքած նյութը պատասխանե տալիս աշակերտներին, թե ի՞նչ պիտի անել տնտեսութիւնը բարձրացնելու համար: Աստված և սրբիքը ավելորդ են և անելիքներ չունեն:

Վերջում աշակերտները գրում են հակադրոնական լուրերներ, կազմում զեկուցում, վատ և լավ տնտեսութիւնների բերքի մասին:

Գ. ԽՈՒՄԲ

«ԳՅՈՒՂ ԳՐՆԵՆԸ» ԹԵՄԱ

Յերեք տարվա տարած աշխատանքների ամփոփումը բերքի տոնին: Նյութեր են հաւաքում զանազան տնտեսութիւնների մասին: Հաշվի յեն առնվում խորհրդային իշխանութեան ձեռնարկած միջոցները — բերքի բարձրացման համար և անցյալների միջոցները — տնտեսում, որհնել եր տալիս սերմերը՝ վորպեսզի բերքը լավ լինի: Վերջում յեղրափակում են թե ինչու բուրժուազիան յեկեղեցու և քահանաների միջոցով աշխատում եր խաբել զյուղացիներին ու բանվորներին:

Բարձր խմբերում ունեցած առարկաների նյութը նույնպէս կարելի յէ կապել հակադրոնական աշխատանքների հետ: Վերցնենք հասարակագիտութիւնը տանքների հետ: Վերցնենք դասակարգային փոխփոխ խմբում, յերբ անցնենք դասակարգային փոխփոխ խմբերութիւնների զարգացումը, չենք կարող չնշել

կրօնի խաղացած՝ դերի մասին և ընդհանրապես հակակրօնական պրոպագանդան կազմվում և հասարակագիտության առարկայի մշակման հետ:

Հակակրօնական պրոպագանդայի առաջադրած խնդիրներն են՝ գիտականորեն բացատրել մարդու կյանքի և աշխատանքի ծագումը. հասարակական կյանքի տնտեսական սոցիալական դրություն փոփոխման պրոցեսի հետ: Ապացուցել, վոր արտադրական ուժերի հետ միասին, փոխվում և նաև կրօնը:

Բացատրել կրօնի ֆիսակարությունը պրոլետարիատին, և նրա ոգտագործումն ու շահավետությունը շահագործող դասակարգի կողմից և այլն:

Ինչպես տեսնում եք, այս բոլոր խնդիրները կտրող են աստիճանաբար բացարտվել հասարակագիտության ծրագրի նյութն անցնելիս: Որինակ «Բաղաբ» թեման մշակելիս, կարելի չե շեշտել ինչպես հոգևորականությունը ոգնում եր ցարական իշխանությանը, ինչպես պետությունը հոգևորականութանն ոգտագործում եր իր շահերի համար հոգևոր դպրոցների, ծխական դպրոցների և այնտեղ դասավանդված կրօնի նշանակության մասին:

Հին և նոր գյուղն անցնելիս, կարելի չե կանգ առնել, հոգեվորականության դերի, նրա կապի մասին հակախորհրդային տարրերի հետ, — բացատրել կրօնական ծխակատարությունները և նրանց նշանակությունը, ախուհետև նոր գյուղի և պրոլետարիատի համար ինչ նշանակություն ունի կրօնը, ինչու նա դեմ և կրօնին, ինչպես և նա ուսյաբարում կրօնական պրոպագանդայի դեմ և այլն:

Բնագիտությունը, ֆիզիկան, աստղաբաշխու-

թյունը, լեզուն, գրականությունը և առհասարակ բոլոր առարկաները, կարելի չե կապել հակադրոնական աշխատանքների հետ:

Նյութն անցնելիս ուսուցիչները ամեն մի հարմար առիթ, ձեռքից բաց չպետք և թողնեն, վորպեսզի ապացուցեն, վոր կրօնը հակասում և գիտությանը:

Ֆիզիկան, վորպես փորձի և ուսումնասիրություն վրա հիմնված հսկայական դաստիարակչական նշանակություն ունի: Ֆիզիկան անցնելով աշակերտները ծանոթանում են գիտական հետադոտական աշխատանքներին և բնության որենքներին: Սովորում են գիտությունը հիմք ընդունելով փաստերը, զգուշությամբ և մանրակրկիտ ուսումնասիրել և փորձեր կատարել, վորպեսզի նկատեն նրանց ֆունկցիոնալ կապակցությունը և այլն:

Սոցալաբաշխությունը. Յերկրի կառուցվածքը, արեգակի համաստեղությունը, յերկրի ձգողական ուժը և այլ խնդիրներ, հոգևորականները, ըստ ավետարանի, այլ բացատրություններ են տալիս, նյութ կծառային հակակրօնական պրոպագանդայի:

Բնագիտությունը. հակակրօնական աշխատանքների համար չափազանց հարուստ նյութ և տալիս: Որինակ գյուղը, նրա կյանքը, նրա սնոտիապաշտությունները լայն հնարավորություն են տալիս ուսուցչին՝ բացատրելու, թե ինչպես կրօնը բացասաբար և անդրադառնում նրա տնտեսության վրա, և նա պետք և աշխատի կրօնը փոխարինել գիտությամբ: Պետք և ապացուցել, վոր կյանքի բարեկեցությունը կախված և իր տնտեսության մեքենայացումից, հողի կատարելագործված մշակույթից և վոչ թե աստծուց:

Յեւ այսպես առարկաներն անցնելիս կարելի չե
կապել հակակրօնական պրոպագանդայի հետ, առանց
ծրագրերը լայնացնելու և ծանրաբեռնելու:

ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Յերեխան դաստիարակվում է վոչ միայն դպրո-
ցում, այլև ընտանիքում, դրսում, փողոցում. հետևա-
պես հակակրօնական աշխատանքները կազմակերպելիս
անհրաժեշտ է ուսումնասիրել շրջապատը, նրա կրօնա-
կան դպացմունքների աստիճանը, շրջապատի կրօնական
կազմակերպությունների դրուժյունը, նրանց կազմը,
կրօնական սովորությունները, աշխատանքի մեթոդ-
ները իրենց ուժերն ու հնարավորությունները և ըստ
այնմ կազմի աշխատանքի ծրագիր, հենվելով կոնկ-
րետ որինակների վրա:

Դպրոցի հակակրօնական պրոպագանդան տար-
վում է չերեք ուղղությամբ. դպրոցում խմբում, կապ-
ված անցնելիք նյութի հետ, դպրոցից դուրս արտա-
դպրոցական ձևով, և ծնողների ու շրջապատի մեջ:

Հակակրօնական պրոպագանդայի հիմնական ու-
ղին—նրա որգանական կապն է ամբողջ դպրոցի աշ-
խատանքների հետ: Այդ իհարկե չի նշանակում, վոր
պետք է ծրագրերը ծանրացնել և հակակրօնական նյու-
թի վերաբերյալ առանձին դասեր մտցնել: Յուրաքան-
չուր կոնկրետ դեպք, վոր չերեխն է գալիս շրջապա-
տում, լինի դա կրօնական ծիսակատարություն, ժո-
ղովրդական սնտոյապաշտություն կամ տոնակատա-
րություն, պետք է ուսումնասիրել, և աշխատել կոնկ-
րետ հակահարված հասցնել այդ դեպքին՝ մատերիա-
լիստական բացատրություն տալով:

Դպրոցը ուսումնասիրելով շրջապատի կրօնական
բոլոր սովորությունները, կազմելով հակակրօնական
աշխատանքի և նրանց բխող դեպքի կարողություն,
նրա կոնկրետ կետերը աստիճանաբար կապում է կոմ-
պլեքսի նյութին:

Դպրոցի հակակրօնական աշխատանքները այն-
պես պետք է դասավորել, վոր դա յուրաքանչյուր տա-
րի համապատասխանի աշակերտի բխող դեպքի պա-
հանջներին: Որինակ պատանեկական հասակում չերե-
խաների մեջ ուժեղ թափով զարգանում է եստեմի-
քական դպացմունքը, նա հուզվում է բնությունից գեղեց-
կույթյամբ, տարվում է ումանտիզմով ու ֆանտազիա-
յով.—այդ հասակում հավատում է ավտորիտետին,
տարվում է իդեալներով, յերկրպագում է նրան և ըն-
դունակ է լինում զանազան հերոսական քայլերի—հենց
հանուն այդ ավտորիտետի: Մենք պետք է կարողա-
նանք այդ հասակի պահանջներին վորոշ ուղղություն
տալ, կապել նրա իդեալները սոցիալիզմի շինարարու-
թյանը և պրոլետարիատի դասակարգային պայքարին:

Այդ տարիքի չեռանդին և վոգեկրությունը վորոշ
ուղղություն տալով, պետք է լծել նրանց հասարակա-
կան աշխատանքների՝ և կապելով դասակարգային պայ-
քարին: Հակառակ դեպքում այդ հասակի հատկույթու-
ններից կարող են ոգտվել մեր թշնամիները, նրանց
թվում նաև կրօնական կազմակերպությունները, զրա-
վելով աշակերտներին—կրօնական միստիցիզմով:

Կրօնական ագիտատորները այդ շատ լավ գի-
տակցում են և վերջին ժամանակներս նրանք մեծ տեղ
են տալիս չիկեղեցական ծիսակատարությունների
գեղարվեստական կողմին, ինչպես որինակ Եջմիածնի

վանքում նրանք հրաշալի լերգեցիկ խումբ ունին—
դաշնամուրով:

Մենք ընդհակառակը հակակրոնական տոնակատա-
րությունների ժամանակ շատ քիչ ուշադրություն ենք
դարձնում նրանց գեղարվեստական կողմի, նրա հո-
տետիկ լինելու վրա: Մեր հակակրոնական կամպա-
նիաները հաճախ կազմակերպվում են հապճեպ, առանց
նախորդ նախապատրաստվելու, վորից գլխավորապես
տուժում է և նրա գեղարվեստականությունը: Եմոցիո-
նալ կողմն ու գեղարվեստական ձևակերպումը, հակա-
կրոնական աշխատանքներում պետք է խոշորագույն
տեղ գրավեն: Նրանք ամրացնում են հակակրոնական
զգացմունքները և ուժեղացնում են ատելությունը
դեպի կրոնը:

Հակակրոնական աշխատանքների համար շատ
մեծ նշանակություն ունի դպրոցներում գործադրվող
ակտիվ մեթոդները, մանավանդ եքսկուրսիոն և հետա-
զոտականը, վորոնք աշակերտին սովորեցնում են քնն-
նադատորեն վերաբերվել դեպի շրջապատը, վորոնեղ
լուրաքանչյուր լերեուլթի պատճառը և նրանց գիտա-
կան բացատրություն տալ. դա սովորեցնում է նը-
րանց քննադատորեն վերաբերվել նաև կրոնական
լերեուլթներին:

Հակակրոնական աշխատանքները կարող ենաբ-
տահայտվել հետևյալ ձևերով.

1. Նախ—կոմպլեքսների հետ կապված նյու-
թերը.

2. Զրույց զանազան իլյուստրացիաներով, մոգե-
կան լապտերով, գեղարվեստական նյութերի ընթեր-
ցումով և այլն:

3. Հարց ու պատասխանի լերեկոներ.

4. Եքսկուրսիաներ.

5. Աշխատանք ակումբում, պատի լրագրեր, ին-
սցենիրովկաներ.

6. Անաստված բջիջ, վոր լուրաքանչյուր դպրոց
պիտի ունենա.

7. Հակակրոնական գրականության—ամսագրերի
ու թերթերի տարածում.

8. Հակակրոնական կամպանիա՝ յիկեդեցական
տոնակատարությունների ժամանակ.

9. Զրույց ծնողական, գյուղական հասարակա-
կան ժողովներում.

10. Աշխատանք խրճիթ-ընթերցարանում և այլն:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱ- ԳԱՆԴԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցում հակակրոնական արտադր սրանական
աշխատանքների հիմքը կազմում է անաստված սերի բը-
ջիջը, վորը ամուր կապ է հաստատում անաստվածնե-
րի միության հետ: Անաստված բջիջի նույն ոակը պետք
է լինի վոչ միայն նրա անդամներ թիջն ավելացնել,
այլև արդեն յեղած անդամներին տալ գիտություն,
պայքարի զենք և սովորեցնել պայքարել կրոնական
զաղափարների դեմ: Խմբակի պարապմունքի ըովանդա-
կությունը պետք է կրի վոչ թի հակակրոնական ակա-
դեմիկ բնույթ, այլ ունենա մի շարք հարվածային հա-
կակրոնական խնդիրներ:

Բջիջում առարկաների անցած հակակրոնական
նյութերը ամփոփվում, խտացվում է և դասարանում

անցածը կարծես ստիմուլ է հանդիսանում արտատաբար ուղեգրականին, տալով նրան ավելի կենդանի հետաքրքրություն,

Բջիշում անցնելիք նյութը մոտավորապես հետևյալ բովանդակությունը պետք է ունենա՝

1. Ինչո՞ւ չենք մենք պայքարում կրոնի դեմ.
2. Կյանքի ծագումն ու զարգացումը.
3. Մարդու ծագումը.
4. Բնության յերևույթներն ու հրաշքները.
5. Կրոնն ու կենցաղը.
6. Ինչպես է առաջ յիկել հավատը՝ դեպի աստվածը.
7. Քրիստոնեությունն ու նրա ծագումը.
8. Կրոնն ու կապիտալիզմը.
9. Կրոնն ու սոցիալիզմի կառուցումը.
10. Ինչպե՞ս պետք է աշխատի անաստված բջիշի անդամը:

Վերջին գլխում աշակերտներին պետք է ծանոթացնել հակակրոնական պայքարի ձևերին ու մեթոդներին:

Խմբակի պարապմունքի հաջողությունը մասամբ կախված է ղեկավարից, նախած թե նա ինչպիսի գիտություն, պատրաստակամություն ու ձեռներեցություն ունի: Ուստի անհրաժեշտ է այդ խմբակին կցել ամենապատրաստի և այդ խնդիրներով հետաքրքրվող ուսուցչին: Յեթն ուսուցչական կազմի մեջ չկա այդպիսի ձեռնհաս մեկը, կարելի չէ դրսից հրավիրել: Այդ պրոպագանդան կողմակերպելու համար, պետք է դեպքերից հատուկ միջոցներից մի վորոշ գումար հատկացնել հակակրոնական աշխատանքներին, իսկ այդ գու-

մարներից մի մասն ել վճարել դրսից հրավիրված ղեկավարին:

Դպրոցը պետք է ունենա անաստված բջիշի անկյուն, վորը կհանդիսանա բջիշի բազան: Խմբակի աշխատանքների աստիճանաբար ծավալումով—հարստանում է և անկյան նյութը: Բջիշի անկյունը կարելի չէ զարգարել հեղափոխական գործիչների նկարներով, հակակրոնական լոգունգրիքով, պատի լրագրերով, կախել հակակրոնական գրականության ցուցակը: Մըշակված նյութերի թեզիսները, նկարները, պլակատները ու լոգունգրերը կախվում և պահվում են անկյունում:

Անկյունը ըստ բովանդակության բաժանում են մի քանի մասի, մի կողմում նկարագրում և յեթեկարող են, նկարում են, զանազան սնոտիապաշտական յերևույթներ, որինակ ինչպես հենց Յերևանում զորավար յեկեղեցու բակում կա մի ծակ քար, վորից հիվանդները, տենդ ունեցած ժամանակ, յերեք անգամ անցնում են, բժշկվելու համար: Նման յերևույթներ ցուցադրում են անկյան մի մասում, մյուս կողմում ցուցադրում են նոր կենցաղը՝ իր սովորություններով, անկյունում կախում են կրոնական ծիսակատարությունների վիսաները: Դիագրամմաներով ցուցադրում են յեկեղեցական տոնակատարությունների վրա ծախսած գումարները: (Հաշվի առնելով իրենց անաստված բջիշի անդամների միջոցով): Մյուս անկյունում ցուցակագրում են, թե թշնամին ինչ միջոցներով է աշխատում գրավել յերեխաներին և այլն: Ցուցադրում են նաև բջիշի նվաճումները կախելով թվական տրվյալները և նրանց աստիճանաբար աճումը:

Լավ կլինի անկյունում հարց ու պատասխանի չերեկո կազմակերպել, հակակրոնական վիկտորինա, վորը կարող ե ունենալ մատավորապես հետևյալ հարցերը.

1. Ինչո՞ւ չեկեղեցին բաժանվեց պետությունից:
2. Ինչո՞ւ կրոնը զենք ե ծառայում բուրժուազիային ձեռքին.

3. Վերոն ե ավելի ձեռնտու—հողամասը ապահովագրել բնությունն պատահարներից, թե հույս զենկ աստծու վրա ե ալլն.

Անկյունում յերբեմն կազմակերպել կոնսուլտացիա, ղեկուցումներ նաե վոչ բջիջի անդամների համար: Կազմակերպվում ե գեղարվեստական զբքերի ընթերցում.

Անհրաժեշտ ե կազմակերպել եքսկուրսիաներ ինչպես՝ զանազան թանգարաններ, փորձադաշտ, արտադրական վայրեր ե ալլն:

Անկյունը կազմա՛լ է պում ե զանազան ուսումնասիրություններ ու դիտողություններ՝ վերցնելով դեպքերը կոնկրետ կյանքից Ուսումնասիրում ե շրջապատի սնոտի ապաշտությունները, զանազան ծխակաթարություններ, գիտակցություն հիմնավորում ու բացատրում ե, ինչպես որինակ, որհնած ջուր պահել—տեսնել փչանում ե թե վոչ: (Հավատացյալները պնդում են, թե սուրբ ե չի փչանու:):

Զանազան գեղարվեստական փորձեր կատարել ե ապացուցել, վոր վոչ թե ասածուց ե կախված բերքը, այլ մարդկության աշխատանքից ու գիտությունից:

Հակակրոնական պրոպագանդայում մեծ դեր ե խաղում գեղարվեստական դաստիարակությունը, լավ լինի յեթե դպրոցը հաճախ կազմակերպի գեղարվեստական յերեկույթներ, ցերեկույթներ ե զանազան խաղեր:

տական յերեկույթներ, ցերեկույթներ ե զանազան խաղեր:

Դպրոցը ե մանուկանդ անասոված բջիջը հակակրոնական աշխատանք ե տանում ծնողները շրջապատի մեջ, կապվում ե խրճիթ-ընթերցարանի հետ իր ուսումնասիրած նյութերի մասին ղեկուցում ե դնում այնտեղ, խրճիթի պատից լողունգներ ու թեղիսներ ե փակցնում:

Դպրոցը լավ ուսումնասիրելով շրջապատը, այդ աշխատանքների համար կոնկրետ ծրագիր ե կազմում:

Ծրագրում առանձապես լայն տեղ պետք ե տալ գյուղատնտեսական գիտելիքներին ու բնություն պատահարներին, որինակ—փաստությունների մասին, Ուսումնասիրում են փաստություններին, նկարում, գրում, ստեղծարարում են փաստությունները, նրանց բացատրում նրանց առաջ գալու պատճառները, նրանց դեմ կովելու միջոցները ե ապացուցում, վոր դա աստ-ծո բարկությունը չե, վոր այդ վտանգի դեմ պետք ե կովել ե վոչ թե աղթել կամ թափոր—կազմակերպել: Վարակիչ հիվանդությունները նույնպես հակակրոնական աշխատանքների նյութ կարող են ծառայել:

Դպրոցը պետք ե ոգտագործի բնության բոլոր յերեկույթները, հակակրոնական աշխատանքների համար, Որինակ յերկրաշարժը, արևի խավարումը կամ ման յերեկույթները, ե բացատրի հասարակությունը, նրանց պատճառները, ցույց տալով նրանց նկարները ե ալլն:

Մամուլը նույնպես անհրաժեշտ ե ոգտագործել հակակրոնական աշխատանքների համար, մանավանդ պատի թերթը, ուր պետք ե տեղական կյանքից զանազան յերեկույթներ ղետեղել:

ՀԱՎԱԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԸ

Անցած գլուխներում ասացինք, թե հակակրոնական աշխատանքները պետք է տանել ծրագրված, կապելով առողջ աշխատանքների և անցնելիք նյութի հետ: Բայց այդ չի նշանակում, թե մենք դեմ ենք հակակրոնական կամպանիաներին: Կամպանիաները, ինչպես զատկական և ծննդյան տոներին հակակրոնական պրոպագանդան ավելի ուժեղանում է և հասնում է կուլմինացիոն կետին: Նրանք նույնպես անհրաժեշտ են, ինչպես և առողջ աշխատանքները: Հոգևորականությունը նախորդ ծրագրված և առանձնապես խնամքով պատրաստվում է այդ տոներին և աշխատում անցկացնել առանձին շուքով:

Ծնունդն ու զատիկը հին աշխարհի ժառանգություն է: Այդ օրերին անհրաժեշտ է մոբիլիզացիայի լենթարկել խորհրդային ամբողջ հասարակայնությունը և հակակրոնական աշխատանքները դարձնել հարվածային, աշխատել յեկեղեցուն հակադրել մեր աղուժները, դպրոցը, խրճիթ-ընթերցարանը և այլն:

Մեր կամպանիաների թերությունն այն է, վոր կազմակերպում ենք շտապով անշուք, առանց գեղարվեստականության, հաճախ սահմանափակվելով միայն գեկուցումով:

Կամպանիայի նախապատրաստական աշխատանքները պետք է սկսել նախորդ վոչ ուշ, քան մի ամիս առաջ: Յեթե դպրոցում գոյություն ունի անաստված բջիջ, նա նախաձեռնությունը վերցնում է իր վրա. նախորդ կազմում ծրագիր: Իսկ յեթե դպրոցներում այդպիսիները չկան, պետք է կազմակերպել հենց այդ

կամպանիային: Այն դպրոցները, վորոնք ունեն աղուժ, լավ կլինի ունենալ մշտական «անաստված»-ի անկյուն. իսկ յեթե չունեն պետք է ժամանակավորապես կազմակերպել, շինքը զարդարել պլակատներով, լոգունգներով, կախել զանազան հեղափոխական գործիչների նկարներ և ամեն կերպ մասսայականացնել այդ հակակրոնական տոնը:

Դպրոցի բոլոր սեկցիաները աշխուժացնում են իրենց աշխատանքները, իսկ նրանց գլխավոր կազմակերպիչը հանդիսանում է անաստված բջիջը: Դրամատիկական սեկցիան կազմակերպում է ներկայացում, ինսցենիրովկա, կոլլեկտիվ կինո հաճախում և այլն: Ֆիզկուլտուրան, ռազմական խմբակը պատրաստում են զանազան վարժություններ խաղեր, հրացանաձև-գուլություն, մրցություններ, և նման աշխատանքներ:

Կամպանիայի հաջողությունը կախված է նրանից, թե վորքան այս սեկցիաներն ու խմբակները ակտիվ աշխատանք կտանեն:

Ուրեմն բոլոր սեկցիաների ուժերով կազմակերպվում է գեղարվեստական հանդիսավոր յերեկո, ուր և գեկուցվում է օրվա նյութի մասին:

Որվա նյութը նախորդ պետք է շոշափել խմբերում, բացատրել աշակերտներին ծննդի կամ զատկի տոնի նշանակությունը, կապել զատիկը Մայիսի 1-ի հետ, դնել կուլտուրական հեղափոխության խնդիրը, բացատրել թե ինչպես կրոնը խոչընդոտ է հանդիսանում կուլտուրական հեղափոխությանը և այլն:

Որվա նյութին նվիրված պատի թերթի հատուկ համար լույս ընծայել:

Բարձր տիպի դպրոցների կոլլեկտիվները այդ

որերին պետք է անցնեն գլուղերը և այնտեղ կազմակերպեն հակակրոնական աշխատանքներ:

Գլուղում նրանք պետք է ուսումնասիրեն անաստված բՆԻՆԸ, չիթե այգլիսինները գոյութուն չունեն, լավ կլինի կազմակերպել: Ուսումնասիրում են կոլանտեսութունը, խրճիթ-ընթերցարանը, գլուղը և այլն: Ոգնում են լույս ընծայել պատի լրագիրը, ուղղում և գրում հոգվածներ:

Գլուղ գնալով նրանք անմիջապես հրավիրում են ակալիվի ժողով — գլուղիտորհրդի նախագահ, բՆԻՆԸ քարտուղար, գլուղի ուսուցիչ, կին կազմակերպչուհին, ԼԿՅԵՄ բՆԻՆԸ քարտուղար և կազմում աշխատանքի կոնկրետ ծրագիր:

Տոնի գիշերը հրավիրում են գլուղական ժողով, դնում ղեկուցում որվա նյութի բացատրության մասին, ղեկուցումից հետո կազմակերպում գեղարվեստական մաս, մատչելի վիկտորինա: Վիկտորինայի հաջող բացատրություն տվողներին կարելի չեն նվերներ տալ:

Կամպանիաների ժամանակ զրադարանները նույնպես պետք է ակտիվ մասնակցություն ունենան: Ներանք ցուցադրում են գրադարանում գոյութուն ունեցող հակակրոնական գրականությունը, կախում են ցուցակը, գրում գրքերի ռեցենզիաները, զանազան պլակատներով գրավում ընթերցողների ուշադրությունը դեպի այդ գրքերը: Ուսումնասիրում են հակակրոնական ընթերցանության ղրությունը, նկարում են դիագրամներ և կախում պատից, գրում համապատասխան հոգված պատի թերթում, նշում այդ ուղղությամբ գոյութուն ունեցող բացերը, կոնկուրս են նշանակում լավ ընթերցողի կամ հակակրոնական գրականություն

և պարբերական ամսագրեր ու թերթեր տարածողների համար և այլն:

Դնում են ղեկուցում գեղարվեստական և հակակրոնական գրքերի:


Կազմակերպում են բարձրաձայն ընթերցանություն, զրույց, կոնսուլտացիա, հակակրոնական գրականություն: Կազմակերպում են հարց ու պատասխանի խաղ, և ճիշտ պատասխանողների ցուցակը կախում պատից:


Կազմում են հակակրոնական բառարան ուր կարելի չեն մտցնել որինակ հետևյալ բառերը:


1. Հիսուսը չեղել է թե վոչ, 2. Ի՞նչ բան է զատիկը, ինչպես է նա առաջ յեկել և այլն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Առաջաբան	3
2. Դպրոցն ու կրօնը	14
3. Հակակրօնական պրոպագանդան և Պետգիտ- խորհրդի ծրագրերը	19
4. Հակակրօնական աշխատանքների մեթոդները	30
5. Արտագասարանական հակակրօնական պրո- պագանդան դպրոցում	33
6. Հակակրօնական կամպանիաները	38







ԳԻՆԸ 15 ԿՈՊ. ՄԾ.Ս. (1¹/₂ մամուլ)



В. Аствадатурян

Антирелигиозная пропаганда в школе

Госиздат ССР Армении
Эривань—1930

ՀՀ Ազգային գրադարան



NL0225500

44. 440